Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 7

Ք. Երևան, 25 նոյեմբերի 2020 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)
Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ ղեկավար

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ին նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումները՝

- **Բաբկեն Պիպոյան**. Արտահերթ նիստի օրակարգի հարցերի կարևորությունը ենթադրում է բովանդակային քննարկում՝ մեթոդաբանության ներկայացում, բացերի վերլուծություն, արդյունքներ, կատարված փոփոխություններ: Քվեարկությունը հեռավար իրականացնելն առանց քննարկման նպատակահարմար չէ, ավելին՝ անհասկանալի է հարցի նման ձևաչափով ու հրատապ քննարկումը: Արդեն իսկ ունեցել ենք այն պրակտիկան, որ ստուգումների պլանը հաստատվել է դեկտեմբերի 1-ից հետո: Հաշվի առնելով նաև դեռևս շարունակվող կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված լարված իրավիճակը՝ ստուգումների բուն գործընթացը կարող է մեկնարկել նաև մի քանի օր ուշ՝ պահելով պլանի հրապարակումից հետո 1ամսվա ժամկետը: Հարցերը ենթական են բովանդակային քննարկման, ինչը կարող ենք քննարկել հնարավորինս սեղմ ժամկետում հրավիրվող աշխատանքային նիստի ընթացքում: Հարկ է նկատել, որ փոփոխություն է տեղի ունենում ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր

մարմնի կազմում և տարեկան պլանը ճիշտ կլինի հաստատել խորհրդնի նոր նախագահի նշանակումից հետո:

➢ **Մելինե Բեգլարյան.** Արտահերթ նիստի հետ կապված կցանկանայի նշել, որ հաղորդագրության մեջ նշված ժամանակահատվածը բավարար չէ ներկայացված բոլոր փաստաթղթերին ծանոթանալու և մանրամասն ուսումնասիրելու համար: Նշեմ նաև՝ հիշատակվում են տեղեկություններ, որոնք բխում են վերլուծություններից (որոնց հղում է արվում), սակայն դրանք բացակայում են: Այդուհանդերձ, ժամանակի սղության պարագայում, հասցրել եմ ուսումնասիրել ներկայացված օրակարգային առաջին 3 հարցերը, որոնց հետ կապված նշել եմ, որ անհրաժեշտ են կից ներկայացնել հիմնավորման փաստաթղթեր (որոնց բացակայության դեպքում չեմ կարող քվեարկել): Բացի այդ, կարծես թե կա դիրքորոշում, որ հրատապության խնդիր չկա, հետևապես կարող է նիստ հրավիրվել՝ ապահովելով հարցերի բովանդակային քննարկումը:

➢ **Արսեն Առաքելյան.** Հարց 2. Ծրագիրը հաստատելուց առաջ, տեսչական մարմինը պետք է ներկայացնի հաշվետվություն և փաստարկված հիմնավորումներ: Օրինակ, ինչո՞վ է պայմանավորված գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի փորձաքննության ծավալների ավելացման մտադրությունը: Կա՞ն արդյոք տվյալներ, որ այդ սննդամթերքի ծավալները կամ տեսակները ավելացել են: Անասնաբուժության ոլորտում ինչու՞ նախատեսված չէ խոզի աֆրիկյան ժանտախտի վերահսկողությունը: Հաշվի առնելով, որ ծրագրով նախատեսված է իրականացնել գիտահետազոտական աշխատանք, պետք է նշել, թե որ ոլորտներում և որ գիտական կառույցների հետ է նախատեսվում համագործակցել: Ցանկալի է ծրագրի մեջ ներառել մոտավոր հաշվարկներ պլանավորված լաբորատոր փորձաքննությունների ծավալների, տեսակների վերաբերյալ և դրանց հիմնավորումը:

Հարց 3. Առաջարկում եմ, տեսչական մարմնի հրապարակումների ցանկը կցել հաշվետվությանը: Քանի հոդված, քանի թեզիս է տպագրվել, որ ամսագրերում և որ գիտաժողովների է ներկայացվել: Pipoyan D., Stepanyan S., Beglaryan M., Stepanyan S., Mantovani A. (2020). Health Risk Assessment of Toxicologically Relevant Residues in Emerging Countries: A Pilot Study on Malachite Green Residues in Farmed Freshwater Fish of Armenia. Food and Chemical Toxicology, 111526 հոդվածում ներառված չեն հեղինակներ տեսչական մարմնից (Բեգլարյանը խորհրդի անդամ է): Ի՞նչ կապ ունի այս հետազոտությունը և ինչու է տեղ գտել հաշվետվության մեջ, եթե տեսչական մարմնից ոչ ոք դրան չի մասնակցել:

➢ **Մարինե Սանդոյան.** Կառավարման խորհրդի քննարկվող օրակարգում ներառված 1-4 հարցերին քվերակում եմ «Կողմ»: Մնացած հարցերին քվերակում եմ «Դեմ», քանի որ ժամանակի սղության պատճառոց հնարավորություն չունեցանք պատշաճ կարգով անդրադառնալու հարցերին և տալու որակավորված և պատշաճ

կարծիք և գնահատական, իսկ «ձեռնպահ» մնալը հակասում է սահմանված կարգին:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին

Արսեն Առաքելյան. Ինչո՞վ է պայմանավորված 2020թ-ին ստուգում անցած կազմակերպությունների կրկնակի ստուգումը: Արդյո՞ք առկա էին խախտումներ առաջին ստուգման ժամանակ: Որոշ տեղեր առկա են ուղղագրական սխալներ, օրինակ՝ «Ռիսկայնություն» սունյակում գրված է «բառձր»:

Առաջարկության հիման վրա Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 2 դեմ և 6 կողմ ձայներով որոշվեց

Հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին

Արսեն Առաքելյան Ծրագիրը հաստատելուց առաջ, տեսչական մարմինը պետք է ներկայացնի հաշվետվություն և փաստարկված հիմնավորումներ: Օրինակ, ինչո՞վ է պայմանավորված գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի փորձաքննության ծավալների ավելացման մտադրությունը: Կա՞ն արդյոք տվյալներ, որ այդ սննդամթերքի ծավալները կամ տեսակները ավելացել են: Անասնաբուժության ոլորտում ինչու՞ նախատեսված չէ խոզի աֆրիկյան ժանտախտի վերահսկողությունը: Հաշվի առնելով, որ ծրագրով նախատեսված է իրականացնել գիտահետազոտական աշխատանք, պետք է նշել, թե որ ոլորտներում և որ գիտական կառույցների հետ է

նախատեսվում համագործակցել: Ցանկալի է ծրագրի մեծ ներառել մոտավոր հաշվարկներ պլանավորված լաբորատոր փորձաքննությունների ծավալների, տեսակների վերաբերյալ և դրանց հիմնավորումը:

Առաջարկության հիման վրա Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 2 դեմ և 6 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

3. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 2 դեմ և 6 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվության նախագծին:

4. ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 1 դեմ և 7 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը

5. «Ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի, մսի և կենդանիների սպանդից գոյացած մթերքի, կաթի և կաթնամթերքի, ձվի, մեղրի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը սահմանելու, «Կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 2 դեմ և 6 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ «Ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի, մսի և կենդանիների սպանդից գոյացած մթերքի, կաթի և կաթնամթերքի, ձվի, մեղրի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը սահմանելու, «Կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի N 82-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, անասնահակահամաճարակային միջոցառումների պետական ծրագրում ընդգրկված հիվանդություններից անկած կենդանիների փոխհատուցման կարգը և կենդանիների ոչնչացման կամ հարկադիր մորթի իրականացման պայմանները, դեպքերը և կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

Տիգրան Խաչատրյան, Տիգրան Գաբրիելյան. Առաջարկում ենք 6-րդ հարցի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջարկները քննարկել ՀՀ կառավարության աշխատակարգով ՀՀ կառավարության որոշումների շրջանառության վերաբերյալ սահմանված ընթացակարգով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 19-րդ կետով և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 28-ի N 11 որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետով էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 4 դեմ և 4 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն չտալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի N 82-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, անասնահակահամաճարակային միջոցառումների պետական ծրագրում ընդգրկված հիվանդություններից անկած կենդանիների փոխհատուցման կարգը և կենդանիների ոչնչացման կամ հարկադիր մորթի իրականացման պայմանները, դեպքերը և կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 2 դեմ և 6 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

8. **«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:**

Արման Պողոսյան. Նախագծով առաջարկվում է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հարկային պարտավորությունների մարման համար ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հատկացնել 64,915.2 հազ. դրամ, որից՝

1) 13,724.6 հազ. դրամը՝ 2017 թվականի 4-րդ եռամսյակում ՀՀ պետական բյուջեից ՊՈԱԿ-ի կողմից ստացված ֆինանսավորումից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները մարելու համար,

2) 36,164.1 հազ. դրամը՝ 2017-2019 թվականների ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցների հաշվին պետական պատվերով լրացուցիչ լաբորատոր փորձաքննությունների իրականացումից առաջացած ԱԱՀ-ի (19,627.4 հազ. դրամ) և շահութահարկի գծով (16,536.7 հազ. դրամ) պարտավորությունները մարելու համար,

3) 15,026.5 հազ. դրամը՝ վերոնշյալ պարտավորությունները չկատարելու արդյունքում առաջացած տույժերը, տուգանքները և շահութահարկի կանխավճարների լրացուցիչ գումարները վճարելու համար:

2017 թվականի 4-րդ եռամսյակում ՀՀ պետական բյուջեից ՊՈԱԿ-ի կողմից ստացված ֆինանսավորումից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները մարելու համար պետական բյուջեից 13,724.6 հազ. դրամ հատկացնելու վերաբերյալ հայտնել ենք, որ պահանջվող գումարի չափի հիմնավորվածության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար բավարար տեղեկատվություն ներկայացված չէ: Մասնավորապես, ներկայացված չէ ՊՈԱԿ-ի կողմից նշյալ ժամանակահատվածում մատուցված ծառայությունների դիմաց ստացված հատուցման գումարների չափի վերաբերյալ տեղեկատվություն:

2017-2019 թվականների ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցների հաշվին պետական պատվերով լրացուցիչ լաբորատոր փորձաքննությունների իրականացումից առաջացած ԱԱՀ-ի (19,627.4 հազ. դրամ) և շահութահարկի գծով (16,536.7 հազ. դրամ) պարտավորությունները մարելու, ինչպես նաև վերոնշյալ պարտավորությունները չկատարելու արդյունքում առաջացած տույժերը, տուգանքները և շահութահարկի կանխավճարների լրացուցիչ գումարները վճարելու

համար պետական բյուջեից գումարներ հատկացնելու վերաբերյալ հայտնել ենք, որ նախագծին կից ներկայացված նյութերից հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել պետական բյուջեի շրջանակներում տեղաբաշխվող գումարների շրջանակներում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով առաջացած հարկային պարտավորությունների (ԱԱՀ-ի գծով պարտավորություններ, շահութահարկ, տույժեր, տուգանքներ շահութահարկի կանխավճարի լրացուցիչ գումար) չափի վերաբերյալ: Մասնավորապես, հասկանալի չէ, թե ինչ սկզբունքով է հաշվարկվել սեփական միջոցների հաշվին պետական պատվերով լրացուցիչ լաբորատոր փորձաքննությունների իրականացումից ՊՈԱԿ-ի՝ ԱԱՀ-ով հարկման բազան: Բացի այդ, հասկանալի չէ, թե ինչու է, օրինակ, 2018 թվականի մասով ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտավորությունների հաշվարկման համար հիմք ընդունվել պետական բյուջեից հատկացված ամբողջ գումարը (որի մեջ ներառված է եղել նաև ԱԱՀ-ի գումարը), այն պարագայում, երբ ՀՀ հարկային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում, եթե ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում դրանց արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի:

Այս առումով, հայտնում ենք, որ ՊՈԱԿ-ի մոտ առաջացած հարկային պարտավորությունների չափի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն ունենալու համար անհրաժեշտ է ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ: Բացի այդ, հայտնում ենք, որ հարցն անհրաժեշտ է քննարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ:

Մյուս կողմից, կարևորում ենք նաև այն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվի տեղեկատվություն ՊՈԱԿ-ի մոտ առաջացած միայն այն հարկային պարտավորությունների վերաբերյալ, որոնք ուղղակիորեն կապված են պետական բյուջեից կատարված հատկացումների (պետական պատվերով կատարված աշխատանքների) հետ:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծին կից ներկայացված ամփոփաթերթում նշված տեղեկատվությունը նույնպես բավարար չէ պահանջվող գումարի չափի հիմնավորվածության վերաբերյալ ամբողջական դիրքորոշում հայտնելու համար:

Մասնավորապես, նախագծին կից ներկայացված ամփոփաթերթում նշված է, որ 2017 թվականի 4-րդ եռամսյակում «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծրագրի շրջանակներում մատուցել է 68,623.1 հազ. ՀՀ դրամի ծառայություն՝ համաձայն կատարողական ակտերի (կցվում են), որից էլ հաշվարկվել է 13,724.6 հազ. դրամ (68,623.1 հազ. դրամ x 20%) ԱԱՀ-ն՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հաշվեգրման մեթոդի: Այս առումով, հասկանալի չէ,

թե արդյոք առկա չեն մատակարարներին վճարված ԱԱՀ-ի դեբետային գումարներ, որոնք պետք է հաշվանցվեին առաջացող պարտավորություններից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծով պահանջվող գումարի չափը լրացուցիչ քննարկման կարիք ունի: Ընդ որում, կրկին հայտնում ենք, որ հարցն անհրաժեշտ է քննարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ:

Միևնույն ժամանակ, առաջարկում ենք՝

1) նախագծի N 1 և N 2 հավելվածների աղյուսակներում «Գումարը (հազար դրամներով)» բառերը փոխարինել «Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումը նշված է դրական նշանով)» բառերով, առանձին նախատեսելով նաև չափման միավորը,

2) նախագծի N 3 և N 4 հավելվածների համարակալումը փոխարինել մեկը մյուսով,

3) նախագծի N 3, N 4 և N 5 հավելվածներից հանել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին վերաբերող հատվածները,

4) նախագծի N 6 հավելվածի աղյուսակում ավելացվող գումարը նախատեսել նաև «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» տողի համար:

Առաջարկություններն ընդունվել են, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 2 դեմ և 6 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ